Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2022 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Մամիկոնյանց 39ա -
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01071
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2009-03-05
1.5 ՀՎՀՀ-ն		00099439
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91418175
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.freda.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@freda.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ալեքսանդր Քալանթարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

HOVHAN NISYAN GOHAR 6607810365

Digitally signed by HOVHAN NISYAN GOHAR 6607810365
Date:

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Փոխառության տրամադրում	173,500,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	588,680,126	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	173,500,000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 37 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության

Grant Thornton

վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

17 հունիսի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		6,907	2,811
Ոչ նյութական ակտիվներ		536	1,447
Հետաձգված հարկային ակտիվներ	4	97,148	90,181
Ներդրումներ ծրագրերում	5	690,592	939,206
Տրված ոչ ընթացիկ փոխառություններ	6	553,899	1,243,755
Երկարաժամկետ դեբիտորական պարտքեր	7	222,430	200,389
		1,571,512	2,477,789
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		314	279
Տրված փոխառությունների ընթացիկ մաս	6	1,095,492	447,175
Դեբիտորական պարտքեր	7	189,436	48,800
Բանկային ավանդներ		1,085	220,869
Մնացորդներ բանկերում		276,122	142,759
		1,562,449	859,882
Ընդամենը ակտիվներ		3,133,961	3,337,671

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր	8	1,922,238	1,872,675
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	2,163,915	2,295,334
		4,086,153	4,168,009
Ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	8	13,234	138,063
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	17,773	15,466
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		4,539	
		35,546	153,529
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(987,738)	(983,867)
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		3,133,961	3,337,671

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 17-ին:

Ալեքսանդր Քալանթարյան
Տնօրենի ժ/պ

Գոհար Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից եկամուտ	11	190,680	231,276
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից եկամուտ		3,149	32,508
Շնորհներից եկամուտ		131,428	119,286
Ֆինանսական ծախսեր	12	(245,163)	(205,172)
		80,094	177,898
Ընդհանուր և վարչական ծախսեր	13	(103,103)	(103,274)
Ֆինանսական ակտիվների արժեզրկման հակադարձումից եկամուտ/ (արժեզրկումից ծախս), զուտ		16,710	(272,607)
Վնաս մինչև հարկերը		(6,299)	(197,983)
Շահութահարկի գծով փոխհատուցում	14	2,428	37,203
Տարվա վնաս		(3,871)	(160,780)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(3,871)	(160,780)
Զուտ ակտիվները տարվա սկզբում		(983,867)	(823,087)
Զուտ ակտիվները տարվա վերջում		(987,738)	(983,867)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումներ ծրագրերում	-	(195,011)
Ծրագրերում ներդրումների օտարումից մուտքեր	75,187	7,143
Ծրագրերում ներդրումներից ստացված եկամուտ	19,013	19,546
Տրված փոխառություններ	(173,500)	(670,000)
Փոխառությունների մարում	285,857	109,859
Տրված փոխառություններից տոկոսային եկամտի ստացում	73,022	96,887
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	(41,899)	(38,463)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ	(19,471)	(18,109)
Վճարումներ մատակարարներին	(43,875)	(32,426)
Զուտ այլ մուտքեր	33,777	10,128
Բանկային ավանդների զուտ շարժ	217,342	90,727
Բանկային ավանդների զծով հաշվարկված տոկոսներից մուտքեր	17,844	28,883
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	443,297	(590,836)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր վարկերից	-	750,000
Վարկերի մարում	(195,915)	(70,915)
Վճարված տոկոսներ	(107,133)	(90,220)
Վճարված վարձակալական վճարներ	(6,800)	(5,940)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(309,848)	582,925
Բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	133,449	(7,911)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(86)	86
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	142,759	150,584
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	276,122	142,759

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը («Հիմնադրամ») հիմնադրվել է 2009թ. հունվարի 8-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 100-Ն որոշման:

Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի («ԳԶՄՀ») միջև 2008թ. հունվարի 8-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատված՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի ֆինանսավորման պայմանագրի պահանջների համաձայն:

Հիմնադրամի նպատակը Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով աղքատության նվազեցմանն օժանդակելն է:

Հիմնադրամի հիմնական գործունեությունն է հանդիսանում գյուղական վայրերի փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորումը, ինչը թույլ է տալիս այդ ձեռնարկություններին բարելավել իրենց մրցակցային դիրքերը շուկայում:

Ֆինանսավորման նպատակով Հիմնադրամը ստացել է շնորհներ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից, ինչպես նաև արտոնյալ պայմաններով փոխառություններ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից:

Հիմնադրամը ղեկավարում է Հոգաբարձուների խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0014, Մամիկոնյանց փ. 39ա, փաստացի հասցեն՝ Երևան, Փարպեցի փող., 22/3 շենք:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2021թ. կազմել է 8 մարդ (2020թ.՝ 8 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ)

«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	*Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	*COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո*	1 ապրիլի 2021թ.
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 17	*Ապահովագրության պայմանագրեր*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 4	*ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1*	*1 հունվարի 2023թ.*

	փոփոխություն)	
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու

համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կահույք և պարագաներ	-	3-5 տարի
Համակարգչային և գրասենյակային տեխնիկա	-	1-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5 տարի համակարգչային ծրագրերի և լիցենզիաների համար:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը վարձակալության պայմանագիր է կնքել իր գրասենյակի համար 1 տարի ժամկետով:

Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Այս կատեգորիան ներառում է ներդրումներն այլ ընկերությունների սեփական կապիտալում: Հիմնադրամը այդ ներդրումները հաշվառում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Իրական արժեքը որոշվում է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով տարվա արդյունքում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված փոխառությունները և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

Վարկեր

Վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի

պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.13 Եկամուտների ճանաչում

Եկամուտները չափվում են ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած իջեցումների գումարները:

Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու Հիմնադրամի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Ներդրումների օտարումից եկամուտ

Ներդրումների օտարումից եկամուտը ճանաչվում է, երբ Հիմնադրամը գնորդին է փոխանցել ներդրման սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, և երբ հնարավոր է արժանահավատորեն չափել եկամտի և գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումների գումարները:

4 Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	90,181	52,978
Շահույթում կամ վնասում ճանաչված	6,967	37,203
Տարեվերջի մնացորդ	97,148	90,181

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2021թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Փոխանցվող հարկային վնաս	4,641	(4,641)	-
Ներդրումներ ծրագրերում	3,386	6,751	10,137
Տրված փոխառություններ	64,201	305	64,506
Դեբիտորական պարտքեր	15,861	4,239	20,100
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,092	313	2,405
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	90,181	6,967	97,148

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Փոխանցվող հարկային վնաս	16,389	(11,748)	4,641
Ներդրումներ ծրագրերում	5,545	(2,159)	3,386
Տրված փոխառություններ	12,852	51,349	64,201
Դեբիտորական պարտքեր	16,761	(900)	15,861
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,431	661	2,092
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	52,978	37,203	90,181

5 Ներդրումներ ծրագրերում

Հիմնադրամին պատկանող ներդրումների մանրամասները ներկայացված են ստորև.

2021թ.	Բաժնեմասը տոկոսային արտահայտությամբ	Ներդրման անվանական արժեք	Ներդրման իրական արժեք	Բաժնետոմսերի հետգնման ժամկետ
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	27.00%	240,000	194,958	30 ապրիլի 2025թ.
«ԷՐԻԶ» ՓԲԸ	33.60%	185,000	178,835	15 նոյեմբեր 2027թ.
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	43.15%	100,000	114,120	31 դեկտեմբերի 2022թ.
«Գոֆրոլայն» ՓԲԸ	36.99%	190,815	202,679	31 դեկտեմբերի 2026թ.
		715,815	690,592	

2020թ.	Բաժնեմասը տոկոսային արտահայ-տությամբ	Ներդրման անվանական արժեք	Ներդրման իրական արժեք	Բաժնետոմսերի հետգնման ժամկետ
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	27.00%	240,000	200,302	30 ապրիլի 2025թ.
«ԷՐԻԶ» ՓԲԸ	33.60%	185,000	185,689	15 նոյեմբեր 2027թ.
«Սիս Նատուրալ» ՓԲԸ	25.00%	210,011	246,833	31 դեկտեմբերի 2022թ.
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	43.15%	100,000	114,120	31 դեկտեմբերի 2022թ.
«Գոֆրոլայն» ՓԲԸ	36.99%	190,815	192,262	31 դեկտեմբերի 2023թ.
		925,826	939,206	

Համաձայն բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի՝ Հիմնադրամը ներդրումներ է կատարում տարբեր ընկերություններում: Համաձայն այդ պայմանագրերի՝ ներդրման օբյեկտ ընկերությունների մյուս բաժնետերերն իրավունք ունեն ցանկացած պահին Հիմնադրամից հետ գնել բաժնետոմսերը:

Կատարված ներդրումների դիմաց Հիմնադրամը բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի համաձայն իրավունք ունի ստանալ շահաբաժիններ իր ներդրման չափին համապատասխան, որոնք պետք է հաշվարկվեն ներդրման օբյեկտ ընկերությունների և այդ ընկերությունների այլ բաժնետերերի կողմից երաշխավորված նվազագույն եկամտաբերության հիման վրա: Այն դեպքում, երբ ընկերությունների գործունեության արդյունքում ստացված եկամտաբերությունը չի բավարարի տարեկան շահութաբաժին վճարելու համար, որը կազմում է Հիմնադրամի ներդրման արժեքի առնվազն 5 %-ը (նվազագույն եկամտաբերություն), ընկերությունների այլ բաժնետերերը պարտավորվում են վճարել հաշվարկված շահաբաժնի և նվազագույն եկամտաբերության տարբերությունը:

Համաձայն բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի՝ յուրաքանչյուր պայմանագրով նախատեսված մարման ամսաթվին Հիմնադրամը պարտավոր է վաճառել ընկերությունների սովորական բաժնետոմսերը, և ընկերությունների մյուս բաժնետերերը պետք է Հիմնադրամից հետ գնեն բոլոր բաժնետոմսերը:

2021թ. հունիսի 1-ին Հիմնադրամն օտարել է «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ում իր ներդրումը 232,751 հազար դրամով: Օտարման գործարքից 12,334 հազար դրամ զուտ վնասը ճանաչվել է «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից եկամտում»:

6 Տրված փոխառություններ

Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների մանրամասները.

2021թ.	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	Համախառն գումար	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
«Ագրոլոգ» ՓԲԸ	5%-10%	2022թ.	143,046	(2,751)	140,295
«Ալկամար» ՍՊԸ	10%	2025թ.	212,554	-	212,554
«Սիս Նատուրալ» ՓԲԸ	5%-10%	2022թ.	121,941	-	121,941
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	9%-12%	2021-2024թթ.	213,800	(6,368)	207,432
«Արզնի մսամթերք» ՓԲԸ	0%	2027թ.	45,802	-	45,802
"Արման ընդ Փարտնյոր» ՍՊԸ	17%	2022թ.	44,627	-	44,627
«Գեչի-15» ՍՊԸ	10%	2023թ.	32,466	-	32,466
«Գոֆրոլայն» ՓԲԸ	5%-10%	2023-2026թթ.	129,964	-	129,964
«Էրիզ» ՓԲԸ	8%	2024թ.	30,000	-	30,000
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	5%-10%	2021-2022թթ.	193,384	-	193,384
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	5%-10%	2022թ.	170,261	(2,189)	168,072
«Ա.Օսիպյան» ՍՊԸ	8%-10%	2021-2025թթ.	324,549	(1,695)	322,854
«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ	12%	2020թ.	69,454	(69,454)	-
«Գարբուշ» ՍՊԸ	10%-12%	2021-2024թթ.	275,910	(275,910)	-
			2,007,758	(358,367)	1,649,391

2020թ.	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	Համախառն գումար	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
«Ագրոլոգ» ՓԲԸ	5%-10%	2022թ.	125,382	(2,751)	122,631
«Ալկամար» ՍՊԸ	10%	2025թ.	218,330	-	218,330
«Սիս Նատուրալ» ՓԲԸ	5%-10%	2022թ.	203,965	-	203,965
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	9%-12%	2021-2024թթ.	197,666	(6,368)	191,298
«Արզնի մսամթերք» ՓԲԸ	0%	2027թ.	41,162	-	41,162
"Արման ընդ Փարտնյոր» ՍՊԸ	17%	2021թ.	125,461	-	125,461
«Գեչի-15» ՍՊԸ	10%	2021թ.	29,759	-	29,759
«Գոֆրոլայն» ՓԲԸ	5%-10%	2023-2026թթ.	117,360	-	117,360
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	5%-10%	2021-2022թթ.	175,980	-	175,980
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	5%-10%	2022թ.	172,379	(2,189)	170,190
«Ա.Օսիպյան» ՍՊԸ	8%-10%	2021-2025թթ.	294,794	-	294,794
«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ	12%	2020թ.	69,454	(69,454)	-
«Գարբուշ» ՍՊԸ	10%-12%	2021-2024թթ.	275,910	(275,910)	-
			2,047,602	(356,672)	1,690,930

Փոխառությունների զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Փոխառություններն արտահայտված են հայկական դրամով:

Տրված փոխառությունների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	356,672	71,401
Տարվա ընթացքում պահուստի աճ	1,695	285,271
Տարեվերջի մնացորդ	358,367	356,672

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ամբողջությամբ արժեզրկել է «Գարբուշ» ՍՊԸ-ին և «Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին տրամադրված փոխառությունները: «Գարբուշ» ՍՊԸ-ի արժեզրկման պատճառ է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, քանի որ ընկերությունը գործունեություն էր ծավալում սահմանամերձ գոտում: «Գարբուշ» ՍՊԸ-ի աշխատակիցների անվտանգության ապահովման նպատակով որոշում է կայացվել ժամանակավորապես կասեցնել ընկերության գործունեությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ ընկերության գործունեության վերսկսման ժամկետն անորոշ է: Փոխառությունների պարտքային ռիսկի ենթարկվածության մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

7 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր ներդրումների օտարումից	403,398	263,804
Այլ դեբիտորական պարտքեր	8,429	87
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(5,763)	(18,682)
Զուտ դեբիտորական պարտքեր	406,064	245,209
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	2,572	819
Կանխավճարված հարկեր	3,230	3,161
	411,866	249,189

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Դեբիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերի մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար դրամ		Հաշվեկշռային արժեք	
	Ժամկետ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Սիս Նատուրալ» ՓԲԸ	2022թ.	160,741	-
«365 գրուպ» ՓԲԸ	2026թ.	120,282	126,348
«Վայոց Ձոր Մսամթերք» ՓԲԸ	2028թ.	66,738	61,798
«Արզնի մսամթերք» ՓԲԸ	2023թ.	47,132	53,408
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	2022թ.	2,742	-
«Ագրոլոգ» ՓԲԸ	2022թ.	-	3,568
		397,635	245,122

Դեբիտորական պարտքերի կորստի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	18,682	23,682
Տարվա ընթացքում պահուստի նվազում	(12,919)	(5,000)
Տարեվերջի մնացորդ	5,763	18,682

Դեբիտորական պարտքերի պարտքային ռիսկի վերլուծության մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

8 Երկարաժամկետ վարկեր

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը փոխառություններ է տրամադրել Հիմնադրամին «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրերի իրականացման համար:

Ստացված վարկերի մանրամասները ներկայացված են ստորև.

Ծրագրի անվանումը	31 դեկտեմբերի 2021 թ.	31 դեկտեմբերի 2020 թ.	Պայմանագրի տոկոսադրույք	Արդյունավետ տոկոսադրույք	Մարման ժամկետ
«Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին»	728,212	741,146	2.0%	14.3%	2047թ. հունվարի 25
«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն»	1,207,260	1,144,463	3.0%	12.3%	2039թ. հունվարի 25
Հայէկոնոմբանկ ՓԲԸ	-	125,129	9.5%	9.5%	2021թ. հուլիսի 1
	1,935,472	2,010,738			

Ստացված վարկերը ճանաչման պահին ձևակերպվել են իրական արժեքով, իսկ իրական և պայմանագրային արժեքների միջև տարբերությունը ճանաչվել է որպես պետական աջակցություն և ներառվել է ակտիվներին վերաբերող շնորհներում (տես ծանոթագրություն 9)։

9 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կառավարություն	2,108,134	2,226,076
Դանիայի Թագավորության կառավարություն	55,781	69,258
	2,163,915	2,295,334

Ակտիվներին վերաբերող շնորհների շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	2,295,334	2,102,224
Տարվա ընթացքում ավելացում	-	312,396
Ճանաչված շահույթում կամ վնասում	(131,419)	(119,286)
Տարեվերջի մնացորդ	2,163,915	2,295,334

ՀՀ կառավարությունից ստացված շնորհն իրենից ներկայացնում է ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված երկարաժամկետ վարկերի ճանաչման պահին նոմինալ և իրական արժեքների միջև տարբերությունը (տե՛ս ծանոթագրություն 8)։

10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	13,388	11,920
Վարձակալության գծով պարտավորություններ	4,385	3,176
Այլ	-	370
	17,773	15,466

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով։

11 Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից եկամուտ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտ	145,568	165,493
Դեբիտորական պարտքերի զեղչման հակադարձումից եկամուտ	29,507	36,900
Բանկային ավանդներից եկամուտ	15,605	28,883
	190,680	231,276

12 Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՀՀ Ֆինանսների նախարարության վարկերի տոկոսային ծախսեր	221,804	203,208
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների զեղչման ազդեցություն	16,858	-
Բանկային վարկերի տոկոսային ծախսեր	5,987	1,119
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	514	845
	245,163	205,172

13 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և այլ հատուցումներ աշխատակիցներին	57,215	55,998
Մաշվածություն և ամորտիզացիա	5,064	6,592
Աուդիտ և խորհրդատվություն	3,000	3,400
Նորոգման և պահպանման ծախսեր	2,692	2,046
Այլ վարչական ծախսեր	35,132	35,238
	103,103	103,274

Այլ վարչական ծախսերը ներառում են ներդրման օբյեկտների ֆինանսական կայացմանն օժանդակելու համար տարատեսակ ծախսեր՝ տարբեր ցուցահանդեսներում ներկայացնելու, արտադրանքը գովազդելու և այլնի համար, ինչպես նաև Հիմնադրամը կրում է մոնիթորինգի և վերահսկողության ծասխեր՝ փոխհատուցելով վերջիններիս աուդիտի և խորհրդատվության այլ ծախսերը:

14 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(4,539)	-
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 4)	6,967	37,203
	2,428	37,203

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(6,299)		(197,983)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2020թ՝ 18%)	(1,134)	18.00	(35,637)	18.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	3,347	(53.14)	10,182	(5.14)
Կուտակված հարկային վնասի օգտագործում	(4,641)	73.68	(11,748)	5.93
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(2,428)	38.54	(37,203)	18.79

15 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվեց՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Բիզնեսի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել մատակարարման շղթայի ընդհատումները, ակտիվների արժեզրկումը, աշխատակազմի հասանելիության սահմանափակումը, ճանապարհորդության սահմանափակումը, առևտրի սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, և ղեկավարությունը դեռ չի գնահատել ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների վրա վերոնշյալի ազդեցությունը:

16 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

16.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 19):

Երկարաժամկետ դեբիտորական պարտքերի իրական արժեք

Երկարաժամկետ դեբիտորական պարտքերը սկզբնական ճանաչման ժամանակ չափվել են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է՝ զեղչելով համապատասխան դրամական մրջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը, որը գնահատվել է 12%: Ղեկավարությունը դատողություն է կիրառել զեղչման տոկոսադրույքը որոշելու համար: Եթե ապագա դրամական միջոցների հոսքերը զեղչված լինեին այլ տոկոսադրույքով, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկարաժամկետ դեբիտորական պարտքերի մնացորդը և տարվա արդյունքը կարող էին տարբերվել:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հիմնադրամի ղեկավարությունը կիրառում է դատողություն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը հաշվարկելու համար՝ օգտագործելով ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա: Տե՛ս ծանոթագրություն 18՝ Հիմնադրամի կողմից պարտքային ռիսկի առավել մանրամասն բացահայտման համար:

Հետաձգված հարկային ակտիվների գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4-ում, Հիմնադրամը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչել է հետաձգված հարկային ակտիվներ 97,148 հազար դրամի չափով

(2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 90,181 հազար դրամ), որը հիմնականում առաջացել է ֆինանսական ակտիվների արժեզրկումից և իրական արժեքով ներկայացումից: Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը կունենա բավարար հարկվող շահույթ՝ հարկային ակտիվներն օգտագործելու համար:

Եթե հարկային ակտիվների օգտագործման հետ կապված ղեկավարության գնահատումներն անիրատեսական լինեն, վերոնշյալ հետաձգված հարկային ակտիվները կարող են ամբողջությամբ չփոխհատուցվել:

17 Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ներդրումներ ծրագրերում	690,592	939,206
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրված փոխառություններ	1,649,391	1,690,930
Դեբիտորական պարտքեր	406,064	245,209
Բանկային ավանդներ	1,085	220,869
Մնացորդներ բանկերում	276,122	142,759
	3,023,254	3,238,973

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,935,472	2,010,738
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,773	15,466
	1,953,245	2,026,204

18 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից, ինչպիսիք են ներդրումները ծրագրերում և տրված փոխառությունները, դեբիտորական պարտքերը, բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ներդրումներ ծրագրերում	690,592	939,206
Տրված փոխառություններ	1,649,391	1,690,930
Դեբիտորական պարտքեր	406,064	245,209
Բանկային ավանդներ	1,085	220,869
Մնացորդներ բանկերում	276,122	142,759
	3,023,254	3,238,973

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Հիմնադրամը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Հիմնադրամի ներդրումները, տրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ապահովված են փոխառուների և ներդրման օբյեկտ ընկերությունների հողով, շինություններով և արտադրական տարածքներով:

Ապահովվածության իրական արժեքն է 5,056,457 հազար դրամ (2020թ.՝ 6,257,612 հազար դրամ)՝ գնահատված անկախ գնահատողի կողմից:

Դրամական միջոցների և բանկային ավանդների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

Արժեզրկման գնահատում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո:

Գնահատում կատարելիս Հիմնադրամը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար Հիմնադրամը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներ:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն չի փոխվել, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստը ճանաչվում է ակտիվի 12-ամսյա պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն ավելացել է կամ առկա են ակտիվի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստ ճանաչվում է տվյալ ակտիվի՝ ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Ակտիվների գծով պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$ECL = EAD \times PD \times LGD, \text{ որտեղ}$$

EAD-ն դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեքն է,

PD-ն՝ դեֆոլտի հավանականությունը,

LGD-ն՝ կորուստը դեֆոլտի դեպքում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեք (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի: Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է գործընկերոջ կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է՝ կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտի հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)

LGD-ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում՝

շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:

- չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD-ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր գործընկերների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

12-ամսյա վարկային ռիսկերից հնարավոր կորուստը և ճանաչման պահի համեմատ պարտքային ռիսկի էական աճ ունեցող, սակայն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ չունեցող ակտիվների կյանքի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորուստը հաշվարկվում են ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, իսկ արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ ունեցող ակտիվների դեպքում՝ հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկում դրամական հոսքերի զեղչման նպատակով կիրառվում է ակտիվի սկզբնական ճանաչման պահին արդյունավետ տոկոսադրույքը:

Հիմնադրամի՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի մնացորդները ներկայացված են ծանոթագրություն 6–ում և 7-ում:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2021թ.	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Վարկեր	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		13.4%	
Մինչև 1 տարի	17,773	172,350	190,123
1-5 տարի	-	1,125,493	1,125,493
Ավելի քան 5 տարի	-	3,857,907	3,857,907
	17,773	5,155,750	5,173,523

2020թ.	Առևտրային և այլ կրեդիտորա-կան պարտքեր	Վարկեր	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		13.4%	
Մինչև 1 տարի	15,466	304,884	320,350
1-5 տարի	-	1,142,762	1,142,762
Ավելի քան 5 տարի	-	4,013,012	4,013,012
	15,466	5,460,658	5,476,124

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, բանկային ավանդները, դեբիտորական պարտքերն ու ներդրումներից և փոխառություններից մուտքերը: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

19 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

19.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքին:

Ներդրումների իրական արժեքի չափում

Ներդրման իրական արժեքը որոշվել է համապատասխան գնագոյացման մոդելի հիման վրա՝ հաշվի առնելով ներդրումային ընկերության շահաբաժինների վերաբերյալ քաղաքականությունը և նրա պատմական ու ակնկալվող ապագա ներկայացումը, նմանատիպ կազմակերպության համար համապատասխան աճի գործոնը, ինչպես նաև ռիսկով ճշգրտված զեղչման դրույքաչափը: Ելնելով ներդրման պայմանագրային առանձնահատկություններից իրական արժեքը որոշվել է՝ հաշվետու ամսաթվի դրությամբ համապատասխան դրամական հոսքերը զեղչելով ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված

վերաֆինանսավորման տոկոսադրույքով: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը զեղչելով նմանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ևս ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Դրամական միջոցների գնահատված հոսքերի զեղչման համար օգտագործված տոկոսադրույքները ներկայացված են ստորև՝

Միջին տոկոսադրույք

	2021թ.	2020թ.
Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր	10%-12%	12.0%
Ներդրումներ ծրագրերում	7.75%	5.5%
ՀՀ Ֆինանսների նախարարությունից գրավով չապահովված փոխառություններ	13.4%	13.4%

20 Պայմանականություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային

մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Հիմնադրամի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,530,021	3,106	1,533,127
Դրամային հոսքերից			
Ստացված գումար	750,000	-	750,000
Մարումներ	(70,915)	(5,940)	(76,855)
Վճարված տոկոսներ	(90,220)	-	(90,220)
Ոչ դրամային հոսքերից			
Իրական արժեքի ճշտում	(312,475)	-	(312,475)
Տոկոսի հաշվեգրում	204,327		204,327
Վարձավճարի հաշվեգրում	-	6,010	6,010
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,010,738	3,176	2,013,914
Դրամային հոսքերից			
Մարումներ	(195,915)	(6,800)	(202,715)
Վճարված տոկոսներ	(107,133)	-	(107,133)
Ոչ դրամային հոսքերից			
Տոկոսի հաշվեգրում	227,782	-	227,782
Վարձավճարի հաշվեգրում	-	8,009	8,009
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,935,472	4,385	1,939,857

22 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնադիրը, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

22.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից:

22.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2021թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնադիր		
Ստացված փոխառություններ	-	625,000
Ֆինանսական ծախսեր	221,804	203,208
Շնորհներից ճանաչված եկամուտ	117,943	105,809
Ճանաչված շնորհներ	-	312,396
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	16,229	14,898

Հազար դրամ Մնացորդներ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնադիր		
Փոխառություններ	1,935,472	1,885,609
Ակտիվներին վերաբերող շնորհներ	2,108,134	2,226,076
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	402	371

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 27.06.2022 10:34